

Արմինե Ա. Գաբրիելյան

ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԿԱԹՍԱՅԱՏԻՊ ԱՆՈԹՆԵՐԸ*

Բանալի բառեր– Արցախի Տիգրանակերտ, անտիկ խեցեղեն, գեղարվեստական հարդարանք, հերալդիկ տեսարան, Կենաց ծառ, այծեր, Հին Արևելք, գլխատիկա:

Մուտք


Արցախի Տիգրանակերտի խեցեգործական արտադրանքի մեջ ուրույն տեղ է զբաղեցնում անտիկ (մ.թ.ա. I – մ.թ. III դդ.) խեցեղենը, որի տիպաբանական և գեղարվեստական քննությունը թույլ է տալիս վեր հանել ոչ միայն Տիգրանակերտի, այլև Արցախ–Ուտիքի խեցեգործության պատկերը, տեսնել նրա կապերը Հայաստանի և հարևան երկրների խեցեգործական արտադրանքի հետ, ներկայացնել դրա տեղը և դերը Հայաստանի այլ կենտրոնների և տարածաշրջանի խեցեգործության զարգացման պատմության մեջ:

Այդ առումով հետաքրքրություն են ներկայացնում կաթսայատիպ անոթները, որոնք տեղեկատվություն են պարունակում անտիկ շրջանի Տիգրանակերտի բնակիչների նյութական և հոգևոր մշակույթի մասին: Դրանք ամբողջական նմուշներով և բեկորային հայտնաբերվում են Արցախի Տիգրանակերտի Ամրացված թաղամասի Հյուսիսային պարսպի (ՀսՊ) և Անտիկ քաղաքային թաղամասի (ԱԹ) անտիկ շերտերից:

1. Կաթսայատիպ անոթների ձևակազմական հատկանիշները և գեղարվեստական հարդարանքը

Կաթսայատիպ անոթերն ունեն հարթ նստուկ, դեպի վեր լայնացող, ձգված գնդաձև իրան, հարթ կտրած շուրթ և պսակի յուրահատուկ լուծում (բարձրությունը՝ 30–35 սմ, շուրթի տրամագիծը՝ 15–18 սմ, նստուկի տրամագիծը՝ 17 սմ, նկ. 1): Դրանց կարճ պսակն ավարտվում է կափարիչ դնելու համար նախատեսված ակոսով, որը եզերվում է ուռուցիկ թմբիկով: Հայտնաբերված շուրթերի բեկորների տրամագծերի տարբերությունները, իրանի

*Հոդվածն ընդունվել է տպագրության 25.02.2019:



Նկ. 1: Տիգրանակերտից հայտնաբերված կաթսայատիպ անոթների գրչանկարները:

և պսակի միացման ձևերը հուշում են կճուճներին նմանվող՝ գնդաձև իրանով և լայնապսակ, ավելի փոքած իրանով ենթատեսակների գոյության մասին: Ուսերին կրում են ուղղահայաց ամրացրած, աղեղնաձև կանթեր: Շուրթերի նման ձևավորումը ենթադրում է կափարիչի առկայություն: Ցավոք անմիջապես կաթսաների հետ կափարիչներ չեն հայտնաբերվել, բայց անտիկ թաղամասից հայտնաբերված ամբողջական և բեկորային կափարիչները կարող էին ծառայել այդ նպատակին:

Իբրև կափարիչ կարող էին ծառայել նաև թասերը, որոնք առատորեն հայտնաբերվում են Տիգրանակերտի անտիկ շերտերից: Որպես խուփեր թասերի օգտագործումը հաստատվում է նաև Բենիամինի անտիկ դամբարանադաշտում թաղման կարանների բերանները ծածկող հակառակ դիրքով դրված թասերի կամ քրեղանների առկայությամբ: Նույն կիրառական նշանակությանն են ծառայել նաև դամբարանադաշտի հիմնահողային և սալարկղային թաղումներին ուղեկցող միջին և փոքր պուլիկները ծածկող թասերն ու ափսեները¹: Միննույն երևույթը փաստագրվել է նաև Մինգեչաուրի կարասային թաղումների պեղումների ժամանակ, որտեղ գրեթե բոլոր մեծ ծորակավոր անոթները ծածկված են եղել թասերով²: Բերված օրինակները փաստում են կենցաղում բաց ամանները որպես խուփ օգտագործելու բավականին հաստատուն սովորույթը, ինչը ինքնաբերաբար արտահայտվել է տվյալ ժամանակաշրջանի թաղման ծեսում: Այս սովորույթի արմատները տեսնում ենք նաև ուրարտական թաղման ծեսում³:

Սակայն տիգրանակերտյան օրինակների վրա առկա հատուկ արված ակոսը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ նմանատիպ անոթները տարբերվում են նրանով, որ դրանց համար հատուկ կափարիչներ պետք է պատրաստեին: Սա իր հերթին հիմք է տալիս ենթադրելու, որ այդ անոթները նախատեսված են եղել հատուկ պահպանություն պահանջող հեղուկների կամ մթերքների համար:

Տիգրանակերտի կաթսայատիպ անոթները պատրաստված են լավ հունցած և հասլած, համասեռ կավից, ունեն հավասարաչափ թրծում: Անոթների ընդհանուր մակերեսը բաց օխրագույն է, լավ կոկած և փայլեցրած: Որոշ օրինակներ հարուստ դեկորատիվ հարդարանք ունեն (նկ. 2-4): Բաց հիմնաներկի վրա կարմիրի տարբեր երանգներով իրականացված հիմնական հորինվածքը տեղադրվում է կափարիչը կրելու համար նախատեսված ակոսից և թմբիկից անմիջապես ցած, անոթի ուսի վրա և բաղկացած է միմյանց հպված գոտիներից: Որպես կանոն առաջին զարդագոտին կազմված է հոծ ներկած եռանկյունիներից: Դրանց հաջորդում են բեկյալ գծեր, թռչներամ, ցանցկեն գոտիներ, շեղ գծերով ներգծված եռանկյուններ ներառող նեղ գոտիներ: Ընդ որում, յուրաքանչյուր գոտի հարդարվում է հիմնականում մեկ մոտիվով: Արդյունքում անոթը ներկայանում է տարատեսակ մոտիվներ ներառող 3-5 գոտիներից կազմված հորինվածքով: Այս հորինվածքի վերջին գոտին որպես կանոն անոթների ամենալայն մասը հարդարող հոծ ներկած

1 Տևն **Եզանյան Լ.**, Շիրակի անտիկ դամբարանադաշտերը, Եր.-Գյումրի, 2010, էջ 105:

2 Տևն **Կազև Ը.**, Археологические раскопки Мингечаура, Альбом кувшинных погребений, Баку, 1960, с. 21.

3 Տևն **Կուֆտին Բ.**, Урартский «колумбарий» у подошвы Арарата и Куро-аракский энеолит, «Вестник Гос. Музея Грузии», Тбилиси, 1944, том XIII-B, с. 8, 6, 9, рис. 5, 7, 9; **Կարապետյան Ի., Ենգիբարյան Ն.**, Քրմի կնիքով թաղում Արգիշտիխնիից, «Բանբեր Երևանի համալսարանի», 2 (107), Եր., 2002, էջ 218:

կամարաշարն է, որի ծայրերը երբեմն հասնում են մինչև անոթի հատակամերձ հատվածը: Կարծես հոծ ներկած եռանկյունիների ծայրերի երկարացմամբ ստացված այս զարդապատկերը խիստ նախընտրելի էր տիգրանակերտյան վարպետների կողմից: Բացի կաթսայատիպ անոթներից այն հատուկ է ծորակավոր սափորներին⁴, և հանդիպում է նույնիսկ գունազարդ, բռնակավոր կարասների վրա:

Հատուկ ուշադրություն է դարձվում նաև այս անոթների կանթերին, որոնք հարդարվում են շեղ, համաչափ կրկնվող գծիկներով (սկ. 4):

Տիգրանակերտից հայտնաբերված նմանատիպ անոթների թիվն անցնում է երեք տասնյակը⁵: Սրանց խեցին իր բաղադրությամբ, որակական հատկանիշներով և գույնով նույնական է Տիգրանակերտի զանգվածային հասարակ և գունազարդ խեցեղենի հետ: Նույնը կարելի է ասել այս անոթների զարդագոտիների և զարդապատկերների մասին, որոնք առատորեն հանդիպում են տիգրանակերտյան անտիկ գունազարդ խեցեղենի վրա և ռճապես նույնական են դրանց, ինչն էլ հիմք է տալիս եզրակացնելու, որ այս անոթները տեղական արտադրության են:

2. Կիրառական նշանակությունը և գուգահեռները

Ինչ վերաբերում է սրանց կիրառական նշանակությանը, ապա պետք է նշենք, որ կափարիչ դնելու համար հարմարեցված, ներձկված պսակներ ունեցող անոթները հունական, միջերկրածովյան և մերձսևծովյան հուշարձաններում կենցաղավարել են մ.թ.ա. VI դարից և գոյատևել մինչև մ.թ. II-III դարերը⁶: Դրանց խեցու ցածր որակը, մոխրապատ լինելը հիմք են տվել հետազատողներին ավելի հավանական համարել, որ դրանք սննդի պատրաստմանը ծառայող խոհանոցային անոթներ՝ կաթսաներ են⁷: Խնդրո առարկա անոթները կրակի որևէ հետք չեն կրում, իսկ որոշ օրինակներ ունեն հարուստ դեկորատիվ հարդարանք, ինչը ևս հիմք է տալիս ասելու, որ դրանք կիրառվել են իբրև սպասք⁸: Այս տեսակետից սրանք մոտենում են բռնակավոր, գունազարդ կարասներին: Հնարավոր է օգտագործվել են սեղանին հեղուկ, առաջին հերթին՝ գինի մատուցելու համար: Շատ հետաքրքիր է սրանց համեմատությունը միջնադարյան դրոշմազարդ կարասների հետ⁹, որոնց հետ բաղդատվում են իրենց դեկորատիվությամբ, գեղարվեստական հարդարանքով, ինչպես նաև գործառույթով:

Անտիկ Հայաստանում կափարիչ դնելու համար նախատեսված շուրթով անոթներ առայժմ միայն ուշ հելլենիստական մեծ քաղաքներից են հայտնի, որտեղ երևում է դրանց կենցաղվարման երկարակեցությունը մինչև մ.թ.

4 Տես **Գարբիելյան Ա.**, Արցախի Տիգրանակերտում հայտնաբերված անտիկ խեցեղենի մի խմբի մասին. «Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը. Բ» Միջազգային գիտաժողով, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Եր., 2017, Զեկուցումներ և զեկուցումների դրույթներ, էջ 53-58, նկ. 1-5:

5 Տվյալներն առ 2018 թ. պեղումները: Հաշվառվել են միայն անոթների շուրթերը, քանի որ դրանց միջոցով միայն կարելի է նույնականացնել խեցանոթի այս տեսակը:

6 Տես **Кругликова И.**, Ремесленное производство простой керамики в Пантикапее в VI-III вв. до н. э., МИА, N 56, 1957, էջ 101-156; **Зеест И.**, Пантикапейская керамика Сарматского времени (по материалам раскопок Пантикапея 1945-1949 гг.), МИА, N 56, М., 1957, էջ 139-159; **Corbett P.**, Attic pottery of the later fifth century from the athenian Agora, "Hesperia", 1949, XVIII, 4, pl. 91.


7 Տես **Кругликова И.**, նշվ. աշխ., էջ 106-156:

8 Այդ պատճառով մենք նախընտրում ենք օգտագործել կաթսայատիպ անոթներ եզրը:

9 Տես **Պետրոսյան Հ.**, Գառնին IX-XIV դարերում, Եր. 1988, էջ. 52-58, աղ. XXII, XXIII, XXIV:



Նկ. 2: Կաթսայատիպ անոթ Անտիկ թաղամասից:



Նկ. 3: Ֆիգուրատիվ պատկերով անոթի բեկորներ:



Նկ. 4: Կաթսայատիպ անոթի բեկորներ:




Նկ. 5: Դրոշմիչ Արմավիրից (մ.թ.ա. VIII-VII դդ.):



Նկ. 6: Ատրեստանյան գլանաձև կնիք Գառնիից:



Նկ. 7: Կաթսայատիպ անոթ Գարաբյուրարից (մ.թ.ա. II-I դդ.):



Նկ. 8: Դրոշմազարդ անոթի բեկոր Արգիշտիխնիլիից:



Նկ. 9: Անոթ Մեգիդոնից, մ.թ.ա. II հազարամյակ:



Նկ. 10-11: Գունազարդ անոթ Շահրի-Սուիթե թաղաքից (մ.թ.ա. 3200-2100 թթ.):



առաջին դարեր: Մ.թ.ա. II-I դարերով թվագրվող սափորի շուրթի բեկոր¹⁰ և լայնաբերան կաթասներ¹¹ հայտնաբերվել են Արմավիրից մ.թ. I-II դարերով թվագրվող, կարմիր անգոբապատ և փայլեցված օրինակներ՝ Արտաշատի N 43 և N 44 դամբարաններից¹²: Ըստ էության տիգրանակերտյան կաթսայատիպ անոթները քիչ ընդհանրություններ ունեն Արմավիրի և Արտաշատի վերը նկարագրված օրինակների հետ, որոնց վրա բացակայում են արտաքին հարդարանքը և շուրթից ցած պսակի վրա տեղակայված ելուստը:

Հետաքրքիր է, որ Վրաստանի հուշարձանների (Ուլլիսցիխե, Յիսիագորա, Սամադլո) ու շատ հելլենիստական շերտերից ևս գտնվել են նկարագրված ձևի և զարդանախշած բեկորներ, որոնց ձևակազմական և գործառնության բնութագրերը չեն կարևորվել, թեև Սամադլոյի հնագիտական արշավախմբի ղեկավար Յուլիոս Գագոշիձեն նկատել է դրանց շուրթերի ձևավորման առանձնահատկությունը¹³:

Առայժմ տիգրանակերտյան կաթսայատիպ անոթների հետ նույնական ամբողջական եզակի օրինակը հայտնի է ներկայիս Ադրբեյջանի Աղջաբեդիում գտնվող (պատմական Հայաստանի Ուտիք նահանգ) Գարաքյոբար հնավայրի դամբարանային նյութերից. այն թվագրվում է մ.թ.ա. II-I դարերով¹⁴ (նկ. 7): Վերոնշյալ անոթի նույնական ձևակազմությունը ու գեղարվեստական հարդարանքը՝ խեցու գույնը, զարդագոտիների օրինաչափ հաջորդականությունն ու նմանությունները խոսում են Տիգրանակերտի մշակության փոխազդեցության մասին: Չենք բացառում նաև, որ Գարաքյոբարի անոթը կարող էր լինել Տիգրանակերտի արտադրանք:

3. Կենաց ծառի և հերալդիկ այծերի պատկերով անոթը

Առկա օրինակների քննությունը ցույց է տալիս, որ այս անոթների գեղարվեստական հարդարանքում կիրառվել են գլխավորապես երկրաչափական զարդապատկերներ: Սակայն 2013 թվին Անտիկ առաջին քաղաքային թաղամասից պեղված կաթսայատիպ անոթը (Տ13, ԱԹ/90, ցավոք այն թերի է, աղ. II, նկ. 3-4) առանձնանում է վերը նկարագրվածներից իրանի լայն հատվածում զետեղված ֆիգուրատիվ հորինվածքով: Կափարիչը կրելու համար նախատեսված փոստրակից և թմբիկից անմիջապես ցած այս անոթների համար կանոնիկ դարձած հոծ եռանկյունիների գոտուն հաջորդում է ուղղահայաց բեկյալ գծերով կազմված զարդամոտիվը: Դրա և կամարաշարի միջև առաջացած ծոփորի վրա է ծավալվում գործողությունը, որի համար ֆոն է հանդիսանում անոթի մակերեսը: Բնի ներքևում լերկ, իսկ ավելի վեր՝ սրածայր տերևներով երկար ճյուղերը դեպի ցած իջեցրած ծառի դիմաց պատկերված է կենդանի (հավանաբար այծ), որի գավակի մի

10 Տես **Тер-Мартirosов Ф.**, К стратиграфии Армавирского холма, ВОН АН Арм. ССР, Ер., 1974, N 1, էջ 59, նկ. 1:

11 Ի. Կարապետյանի քանակոր հաղորդմամբ, ինչի համար հայտնում ենք մեր երախտագիտությունը:

12 Տես **Խաչատրյան Փ.**, Արտաշատ II, Եր., 1981 թ., էջ 132, նկ. 28/9, 29/1:

13 Տես **Гагошидзе Ю.**, Самадло, Тбилиси, 1979, с. 89, табл. XIII, 317, 318; **Macharadze S.**, Neue Funde aus Zichia-Gora, AMIT 2000, Band 32, p. 143-158, abb.5/1, 7/1:

14 Տես **Рзаев Н.**, Художественная керамика Кавказской Албании (IV в. до н. э. - I в. н.э.), Баку, 1964, էջ 104, նկ. 78; **Эминли Дж.**, Расписная керамика эллинистического периода Азербайджана, «Археология, этнография, фольклористика Кавказа», Тбилиси, 2010, էջ 301-303, նկ. 6:

մասն ու հետևի ոտքերն են միայն պահպանվել (նկ. 3): Կենդանին ամուր կանգնած է հոծ կամարաշարի վրա, իսկ առջևի ոտքերով, ամենայն հավանականությամբ, հենվել է հաստաբուն ծառի բարձր ճյուղերին: Միևնույն անոթի մյուս բեկորի վրա պահպանվել է մեկ այլ կենդանու հոծ ներկած մարմնի վերին հատվածը, գծիկով տրված ականջը կամ կոտոշը, երկար վիզը, մեջքն ու գավակը (նկ. 4): Ամենայն հավանականությամբ տիգրանակերտյան կաթսայատիպ անոթի վրա պատկերված են եղել ծառին մոտեցող կամ դրա երկու կողմում հերալդիկ կանգնած այծեր:

Հայաստանի ուրարտական և հետուրարտական շրջանի հուշարձաններից հայտնի են նման հորինվածքով մի քանի նմուշներ: Դրանցից մեկը սև քարից պատրաստված ասորեստանյան շրջանի գլանաձև կնիք է, որը հայտնաբերվել է Գառնիի ամրոցի ներսում, հյուսիսային պատի հինգերորդ աշտարակի մոտից (նկ. 6): Կնիքի վրա պատկերված է բնի հիմքից որոշակի անկյան տակ դեպի վեր աճող փշատերև ճյուղերով ծառի դիմաց դեպի այն նայող ստատիկ կանգնած այծ¹⁵: Հաջորդ օրինակը Արգիշտիխինիլից գտնված դրոշմազարդ անոթի բեկորն է (նկ. 8): Կարմիր անգոբապատ կճուճի ուսին գլանաձև կնիքով դրոշմված գոտին բաղկացած է Կենաց ծառի և դրա երկու կողմերում պատկերված այծերի ու դրանցից մեկին հետապնդող կենդանու (ըստ Հ. Մարտիրոսյանի՝ առյուծի) համաչափ կրկնվող դինամիկ ֆիգուրաներից¹⁶: Ծառը հիշեցնում է միջագետքյան արվեստում շատ հայտնի պալմետան (palmetta) կամ փյունիկյան արմավենին: Այս հորինվածքն այլ մեկնաբանմամբ է ներկայանում Արմավիից գտնված, եղջերուի ոսկորից պատրաստված դրոշմիչի վրա (մ.թ.ա. 8-7-րդ դդ. (նկ. 5): Դրա գլխավոր դիմադրաբան կողմի վրա, կիսալուսնաձև հիմքով ուղղանկյուն վահանակի կենտրոնում պատկերված է սրագագաթ Կենաց ծառ, որի երկու կողմերում դեպի ծառը շրջված երկու այծերի հերալդիկ ֆիգուրաներ են: Այծերը հետևի ոտքերից մեկով հենված են ծառի հիմքին, իսկ առջևիններով կարծես գրկել են դրա բունը¹⁷: Վերոնշյալ բոլոր օրինակների համար ընդհանուր է ծառի առջև կանգնած կամ դրան վերջույթներով հենված կենդանու՝ այծի (այծերի) պատկերը:

Առաջավոր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի հնագույն մշակույթներում այծը կապված էր Կենաց ծառի հետ, որը պտղաբերության, կյանքի հավերժության խորհրդանիշ էր: Կենաց ծառի ուղղահայաց կառուցվածքը կապված էր դիցաբանության՝ առաջին հերթին տիեզերաբանության ոլորտի, իսկ հորիզոնականն առնչվում էր ծեսի և դրա մասնակիցների հետ¹⁸: Ծառի երկու կողմերում հերալդիկ կանգնած այծերի պատկերագրությանը վերը նկարագրված հորինվածքը տարածված էր դեռևս մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակներից Հին Արևելքի գլխատիկայում և խեցեղենի դեկորատիվ հարդարանքում (նկ. 9-11), իսկ ավելի ուշ նաև տորևտիկայում¹⁹:

15 Տե՛ս **Аракелян Б.**, Гарни I, Результаты раскопок 1946-1950 гг. Ер., 1951, էջ 27, նկ. 15:

16 Տե՛ս **Мартиросян А.**, Аргиштихинили. АПА N 8, Ер., 1974, էջ 94, նկ. 59:

17 Տե՛ս **Аракелян Б.**, О некоторых результатах археологического изучения древнего Армавира, ИФЖ, 1969, N 4, էջ 166, նկ. 8: **Arménie** Trésors de l'Arménie ancienne, Sous la direction de Jacques Santrot, Coédition musée Dobrée, Nantes, 1996, p. 170, fig. 169:

18 Տե՛ս **МНМ, М.**, 2008, էջ 332:

19 Տե՛ս **Amiran R.**, Ancient Pottery of Holy Lend, 1970, Izrael, p.163, fig. 166; **Ghirshman R.**, Notes Iranienes, XI. Le rhyton en Iran, «Artibus Asien», vol. 25, N 1, 1962, էջ 60, fig. 13, 14; **Лукин В.**, Золотой сосуд с «историей

Այս հորինվածքով բազմազան և բազմաքանակ արտեֆակտներից իբրև օրինակ բերենք միայն Իրանի Շահրի-Սուհթե (մ.թ.ա. 3200–2100 թթ.) քաղաքից²⁰ հայտնաբերված հնագույն անոթը (նկ. 10–11): Նախորդ դարի 70-ական թվականներին իտալական հնագիտական արշավախմբի կողմից պեղված սկահակի բաց հիմնագույնի վրա շագանակագույնով պատկերված են ծառեր և տարբեր դիրքերում հինգ բեզոարյան այծեր (*Capra aegagrus*): Սակայն անոթը պտտելիս անհիմացիայի տպավորություն է ստեղծվում, կարծես այծը ցատկում է ծառից տերև պոկելու համար²¹:

Եզրակացություններ

Տիգրանակերտից հայտնաբերված կաթսայատիպ անոթների քննությունը հնարավորություն է տալիս ոչ միայն վերականգնել սեղանի սպասքի մի կարևոր տեսակը, այլև դրա հարուստ հարդարանքը, ինչը թույլ է տալիս քննարկել եզակի մի հորինվածք:

Կենաց ծառի դիմաց կամ երկու կողմում կանգնած այծերի պատկերով հորինվածքը, որն առավել տարածված և բնութագրական է դառնում հատկապես Ուշ բրոնզի դարաշրջանում²², արձագանք ստանալով հայտնվում է ասորեստանյան, ուրարտական և աքեմենյան արվեստում՝ ծիսա-պաշտամունքային նշանակություն հաղորդելով այն իրերին (կնիքներ, խեցանոթներ, եղջերագավաթներ), որոնց վրա պատկերվում էր: Անտիկ շրջանում այն կարծես թե հայտնի չէր: Ու թեև ծառ կամ Կենաց ծառ հիշեցնող զարդանոտիվներ հանդիպում են Արտաշատից, Արմավիրից, Բենիամինից, Օշականից հայտնաբերված մ.թ.ա. III–I դդ. թվագրվող գունազարդ անոթների վրա²³, իսկ առանձին այծի պատկերներ՝ Բենիամինի և Արտաշատի համաժամանակյա գտածոների վրա²⁴, այնուամենայնիվ, Հայաստանի անտիկ խեցեղենում նման հորինվածքով պատկեր մեզ հայտնի չէ: Տիգրանակերտյան գտածոն առայժմ միակ օրինակն է, որը ցուցանում է առկա ծիսական մոտիվի կենսունակությունը: Այս հորինվածքի քննությունը կարևոր է նաև այն առումով, որ հետազայում, հատկապես միջնադարում, այն շատ լայն տարածում է ունեցել՝ մասնավորապես եղել է դրոշմազարդ կարասների հիմնական մոտիվներից մեկը:

Արմինե Ա. Գարրիեյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Հայաստանի հելլենիստական և ուշ անտիկ շրջանի հնագիտությունը, արվեստը, գլխատիկան:

arminegabriel.iae@gmail.com

козы» из Марлика. «Центральная Азия. Новые памятники письменности и искусства». М., 1987, էջ 223–232:

20 Այսպես կոչված «Այրված քաղաքը» գտնվում է Իրանի հարավ-արևելյան Միստան և Բելուջիստան օստանում:

21 Տե՛ս **Foltz R.**, Iran in World History. Oxford University Press. p.6.; https://books.google.fr/books?id=zuSDAAAQBAI&pg=PA6&lpg=PA6&dq=jiroft+earliest+script&source=bl&ots=cffPAW-NZ&sig=kxdYvnBBIUGhbx6zVGT8sF7Lhvs&hl=fr&sa=X&ved=2ahUKewiLJK_b-tHdAhUSzYUKHXt_BI84FBD0ATABegQICRAB#v=onepage&q=jiroft%20earliest%20script&f=false (մուտք՝ 16.02.2019)

22 Տե՛ս **Amiran R.**, Ancient Pottery of Holy Lend, 1970, Izrael, էջ 164:

23 Տե՛ս **Նախշաբաբյան Ա.**, Հայաստանի ուշ հելլենիստական ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենի զարդանոտիվները, Առենախոսություն, Եր., 2003, էջ 98–99, աղ. 20/1–5:

24 Տե՛ս նշվ. աշխ., էջ 111, աղ. 21/3, 22/4:

Summary

CATTLE-SHAPED VESSELS OF TIGRANAKERT IN ARTSAKH

Armine A. Gabrielyan

Key words – Tigranakert in Artsakh, antique ceramics, ornamental decoration, heraldic scene, Tree of Life, goats, Ancient East, glyptic.

One of the main results of ashcan logical excavations is the rich collection of late antique pottery of Tigranakert of Artsakh (1st century BC–3rd century AD). This distinguished by the great variety of forms and types. The present article is devoted to the morphological, functional and artistic examination of antique ceramics of Tigranakert of Arsakh.

The number of such vessels founded from Tigranakert is over three dozens. One of their peculiarities is the flat-cut lip and the unique solution of the crown, which has a circular groove. These vessels do not carry any trace of fire. There are some examples of boiler-shaped vessels which have rich decorations, that is why it gives grounds to say that they were used as a tableware.

One of the sucl, vessels composition is the Life Tree and two goats standing besides.

The iconography of the heraldic-standing goats on both sides of the tree was widespread even before the 4th–3rd millennium BC in the Old East's glyptic and in the ornamental decoration of ceramics, later also in the toreutics.

We do not know anything about the illustration with such composition among antique ceramics of Armenia. The finding of Tigranakert is still the only one that shows the viability of the existing tentative motive. The detailed examination of this composition is also important in the sense that later, especially in the Middle Ages, it was widely spread, in particular, it was stamp-ornament: of so-called stamped jars.

Резюме

КОТЛООБРАЗНЫЕ СОСУДЫ ИЗ АРЦАХСКОГО ТИГРАНАКЕРТА

Армине А. Габриелян

Ключевые слова – Арцахский Тигранакерт, античная керамика, декоративное убранство, геральдические композиции, Древо жизни, козы, Древний Восток, глиптика.

Одним из главных результатов археологического исследования Тигранакерта в Арцахе является богатая коллекция позднеантичной керамики (I в. до н.э.– III в.н.э). Она имеет большое разнообразие форм и типов. Настоящая

статья посвящена морфологическому, функциональному и художественному анализу античных котлообразных сосудов из Тигранакерта.

Количество подобных сосудов, найденных в Тигранакерте, больше тридцати. Одной из особенностей исследуемой керамики является своеобразное решение венчика, где имеется специальная выемка для плотного закрытия крышкой. Некоторые образцы имеют богатое декоративное убранство в виде геометрических, растительных орнаментов и фигуративных мотивов. Поскольку фрагменты рассматриваемых сосудов не имеют никаких следов огня и покрыты богатой орнаментацией, более чем вероятно, что они являлись частью парадной посуды.

На одном из таких сосудов изображена композиция, состоящая из Древа жизни в центре и двух коз по обе его стороны. Геральдическая композиция Древа жизни с двумя козами была широко распространена в Древнем Востоке в промежутке 4–3-его тысячелетий до. н. э. в глиптике, керамике, а позднее и в торевтике.

В античной керамике Армении этот мотив нам не известен. Находка Тигранакерта является единственным примером, который иллюстрирует жизнеспособность данного ритуального мотива. Подробное его исследование особенно важно, если иметь в виду его широкое распространение в средние века, в особенности в орнаментации так называемых штампованных карасов.

REFERENCES

1. **Arakeljan B.**, Garni I, Rezul'taty raskopok 1946-1950 gg. Yer., 1951. **(In Russian)**
2. **Arakeljan B.**, O nekotoryx rezul'tatax arheologicheskogo izuchenija drevnego Armavira, IFZh, Yer., 1969, N 4, s. 157-174 **(In Russian)**.
3. **Eminli Dzh.**, Rospisnaja keramika jellinisticheskogo perioda Azerbajdzhana, Arheologija, jetnografija, fol'kloristika Kavkaza, Tb., 2010, s. 301-303 **(In Russian)**.
4. **Gabrielyan A.**, Arcaxi Tigranakertum haytnabervac' antik xeccegheni mi xmbi masin, «Hayastany' yev aryevelaqristoneakan qaghaqakrt'ut'yuny'. B» Mijazgayin gitajhoghov, HH GAA Aryevelagitut'yan institut, Yer., 2017. eg 53-58 **(In Armenian)**.
5. **Gagoshidze Ju.**, Samadlo (arxeologicheskie raskopki), Tb., 1979. **(In Russian)**
6. **Karapetyan I., Ye'ngibaryan N.**, Qrmi kniqov t'aghum Arxishtixiniliic, Banber Yeryevani hamalsarani, 2 (107), Yer., 2002, eg 218-225 **(In Armenian)**.
7. **Kaziev S.**, Arxeologicheskie raskopki Mingechaura, Al'bom kuvshinnyh pogrebenij, Baku, 1960 **(In Russian)**
8. **Kruglikova I.**, Remeslennoe proizvodstvo prostoj keramiki v Pantikapee v VI-III vv. do n. je., M., 1957, MIA, N 56, s. 96-159 **(In Russian)**
9. **Kuftin B.**, Urartskij «kolumbarij» u podoshvy Ararata i Kuro-arakskij eneolit, Vestnik Gos. Muzeja Gruzii, Tb., 1944, tom XIII-13 **(In Russian)**.
10. **Lukonin V.**, Zolotoj sosud s «istoriej kozy» iz Marluka. // Central'naja Azija. Novye pamjatniki pis'mennosti i iskusstva, M., 1987. s. 223-232 **(In Russian)**.
11. **Martirosjan A.**, Argishtixinili. APA N 8, Yer., 1974 **(In Russian)**.
12. **Mify narodov mira**, MNM, glavnyj redaktor S. Tokarev, jelektronnoe izdanie, M.,

2008. ebook **(In Russian)**.

13. **Naxshqaryan A.**, Hayastani ush hellenistakan jhamanakashrjani gunazard xechgheni zardamotivnery', Atenaxosut'yun, Yer., 2003 **(In Armenian)**.
14. **Petrosyan H.**, Gar'nin IX-XIV darerum, Yer., 1988 **(In Armenian)**.
15. **Rzaev N.**, Xudozhestvennaja keramika Kavkazskoj Albanii (IV v. don. e. – I v. n.e.), Baku, 1964 **(In Russian)**.
16. **Ter-Martirosov F.**, K stratigrafii Armavirskogo xolma, VON AN Arm. SSR, Yer., 1974, N 1, s.57-68 **(In Russian)**.
17. **Xachatryan Jh.**, Artashat II, Yer., 1981 **(In Armenian)**.
18. **Yeganyan L.**, Shiraki antik dambaranadashterə, Shiraki hnagitakan yev patmaazgrakan usumnasirut'yunner, Yer.-Gyumri, 2010 **(In Armenian)**.
19. **Zeest I.**, Pantikapejskaja keramika Sarmatskogo vremeni (po materialam raskopok Pantikapeja 1945-1949 gg.), MIA N 56, M., 1957, s.139-159 **(In Russian)**.